# Նա իսկական սխրանք գործեց Անիի ամայի ավերակներում

## ԼՐԱՆՈՒՄ Է ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ



Մեծատաղանդ ճարտարապետ և բազմաբեղուն հնագետ Թորոս Թորամանյանի կյանքը ամբողջությամբ նվիրված է եղել իր սիրած արվեստին և ժողովրդին ծառայելու սրբազան գործին: Եվ այդ բանում նա հասել է ակնառու արդյունքի՝ դառնալով հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիրներից մեկը: Թորոս Թորամանյանը առաջինն էր, որ դասակարգեց ու բնութագրեց մեր ճարտարապետության զարգացման շրջանները, բացահայտեց նրա ինքնատիպությունը, առանձնացնելով նրա տեղը համաշխարհային մշակույթի գանձարանում:

Հայ ճարտարապետության պատմության մեջ հազիվ թե գտնվի մի այլ դեմք, որի գործունեության նշանակությունը գերազանցի Թորոս Թորամանյանի թողած ստեղծագործական ժառանգությանը: Սխրանք՝ ամայի ավերակներում, հայրենանվեր հերոսություն այսպես միայն կարելի է բնութագրել նրա կյանքն ու գործունեությունը, որից 31 տարիները մեծանուն գիտնականը նվիրել է իր ժողովրդի կառուցողական արվեստի ուսումնասիրությանը:

Թորոս Հարությունի Թորամանյանը ծնվել է 1864 թվականի սեպտեմբերի 18-ին Արևմտյան Հայաստանի Շապին-Գարահիսար քաղաքում: Սովորել է ծննդավայրի հայկական դպրոցում: Ճարտարապետական բարձրագույն կրթություն է ստացել Կոստանդնուպոլսի գեղարվեստից վարժարանում: Այնուհետև աշխատել է որպես նախագծող ճարտարապետ: 1895-ին հայկական ջարդերի հետևանքով նա հեռացել է ծննդավայրից, տեղափոխվել Բուլղարիա, ապա Ռումինիա, ուր ապրել է մինչև 1903 թվականը: Հին աշխարհի ճարտարապետությանը մոտիկից ծանոթանալու համար մեկնել է Եգիպտոս, Հունաստան, Հռոմ:

Այնուհետև, Փարիզում ծանոթանալով և բարեկամանալով բանասեր Կ. Բասմաջյանի հետ, Թ. Թորամանյանը նրա ուևկցությամբ ուղևորվում է Անի՝ ճարտարապետական հուշարձանների ալբոմ կազմելու մտադրությամբ: Անին դյութում է նրան անկրկնելի հուշարձանների բարձր արվեստով, գեղարվեստական կատարելությամբ. "Ուխտեցի մնալ այստեղ,- գրում է նա,- աշխատել տքնել, մեր մեծ ժողովրդի հանճարի չնաշխարհիկ բեկորները փլատակներու և գերեզմանային տխուր հողակույտերու տակեն ազատել և ցույց տալ ամբողջ գիտական աշխարհին":

Անիի հրաշալիքներն ուսումնասիրելու գայթակղությունը և վերադարձի միջոցներից զուրկ լինելը Թորամանյանին հարկադրում են մնալ և անհավատալի զրկանքների պայմաններում նվիրվել հայ ճարտարապետության ուսումնասիրության գործին: Այստեղ նա ուսումնասիրել ու չափագրել է Առաքելոց, Կաթողիկե, Գագկաշեն, Հովվի, Տիգրան Հոնենցի, Փրկչի, Վրաց և այլ եկեղեցիներ, պալատներ, հյուրատներ, բնակելի տներ, պարիսպներ, կամուրջներ, վերակազմել է դրանց նախագծերը, որոնցով Անիի ավերակները գիտության մեջ նոր լույս սփռեցին: Այդ աշխատանքները մեծացրին իրենց ուսումնասիրությունների շրջանակը, հասան մինչև Շիրակի բարձրավանդակ, Արագածոտն գավառ, Արարատյան դաշտ և այլ վայրեր, նոր լույս ու կյանք տվեցին հայկական ճարտարապետության քարե գանձերին:

Անիի հուշարձաններից բացի Թորամանյանին գերում է նաև Զվարթնոցը և նույնքան պրպտուն ու եռանդուն ուսումնասիրություններն էլ հանգեցնում են տաճարի ամբողջական կերպարի վերստեղծման գաղափարին, որի հիմնավորումը շարադրում է "Զվարթնոցի եկեղեցին" հայկական ճարտարապետության ուսումնասիրության բարձրագույն նվաճումը հանդիսացող աշխատության մեջ, որ հայերեն գրված առաջին ճարտարապետական աշխատությունն է, և որով անժխտելի փաստերով նա ապացուցեց հայկական ճարտարապետության ինքնուրույնությունն ու նրա ձևերի, լուծումների ազդեցությունն այլ ժողովուրդների ճարտարապետական դպրոցների կազմավորման, զարգացման ընթացքի վրա: Եվ այն համարվեց ճարտարապետության պատմության մեջ հեղաշրջում:

Թորամանյանի կատարած աշխատանքները արժանացան Պետերբուրգի գիտությունների կայսերական ակադեմիայի բարձր գնահատականին: Պատահական չէ, որ նրա "Էջմիածնի տաճարի հնագույն ձևերի մասին" աշխատությունը Պետերբուրգում 1909 թվականին թարգմանաբար հրատարակելու կապակցությամբ իր գրած ուղեկից հոդվածում Ն. Մառը հեղինակին անվանել է ճարտարապետական լեզվի առաջին ուսուցիչ:

Թորամանյանի գիտական ծառայությունները հիմք և նյութ տվեցին նաև ավստրիացի մեծանուն գիտնական Ն. Սարժիգովսկուն 1918-ին կազմել և հրատարակել իր հռչակավոր "Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան" երկհատոր գիրքը:

Զրկանքների և տառապանքի մաքառումով է կատարվել նաև գիտական-ճարտարապետական մյուս՝ "Տեկորի տաճարը", "Բագարանի Ս. Թեոդորոսը", "Դավիթ և ժամտուն հայոց հնագույն եկեղեցիների մեջ" և այլ աշխատություններ, որոնք լայն արձագանք են ունեցել ռուսական և եվրոպական գիտական շրջաններում:

Նրա գրած շատ ուսումնասիրություններ բազմաթիվ նյութերի հետ 1918 թ. գաղթի ժամանակ կորչում են, և միայն տաղանդավոր ճարտարապետի անսահման եռանդն է, որ հնարավորություն է տալիս հավաքելու և համախմբելու այդ մասունքները, որոնք լույս տեսան երկու ծավալուն հատորով "Նյութեր հայկական ճարտարապետության պատմության" ընդհանուր խորագրով:

Մեծ է Թորամանյանի ավանդը նաև սովետահայ ճարտարապետության կազմավորման ու զարգացման գործում: Բավական է հիշել նրա սերտ համագործակցությունը Ալեքսանդր Թամանյանի և այլ արվեստագետների հետ, որոնց նախաձեռնությամբ 1923-ին ստեղծվեց հնությունների պահպանության կոմիտեն: Նրանց ջանքերով վերականգնվեցին շատ հուշարձաններ, մեծ համբավ բերելով Հայաստանի միջնադարյան ճարտարապետությանը:

Թորամանյանի հետ համագործակցել են նաև օտարազգի շատ գիտնականներ, ճարտարապետներ, որոնք մեծ հետաքրքրություն են տածել ճարտարապետի ուսումնասիրությունների հանդեպ: Նրա գիտական մեծ ժառանգությունը և անձնվեր գործունեությունը որպես երախտիք արձագանք են գտել արվեստագետների, գիտնականների, գրողների, ճարտարապետների ստեղծագործություններում: Այդ են վկայում Մարտիրոս Սարյանի վրձնով ծնված մեծանուն Թորամանյանի դիմանկարը, հայ և օտարազգի գիտնականների աշխատությունները նվիրված ճարտարապետի հիշատակին, կամ բանաստեղծների տողերը, ժամանակակիցների հիշողությունները, նրա կյանքին և գործունեությանը նվիրված բազում հոդվածները: 1933-ին նրան շնորհվեց գիտության վաստակավոր գործչի կոչում: Նա մահացավ 1934 թվականին, իսկ 1969-ին սահմանվեց Թորամանյանի անվան հուշամեդալ, նրա անունով կոչվեց Երևանի փողոցներից մեկը:

Թորոս Թորամանյանը ապրեց ստեղծագործական ազնիվ կյանքով, որն ամբողջովին նվիրեց իր ժողովրդին, գիտությանը, նա աշխարհին ներկայացրեց հայ ժողովրդի նշանակալից ավանդը համամարդկային ճարտարապետության մեջ: Նրա շնորհիվ հայկական ճարտարապետությունը միջազգային ճանաչում ստացավ որպես ինքնուրույն ճարտարապետական ոճ:

Իրավացի են հնչում Ավետիք Իսահակյանի խոսքերը. "Թորոս Թորամանյանը իր սխրալի գործերով բոլոր ժամանակների հայ ժողովրդի համար դարձավ Թորոս ճարտարապետ, և մեծացավ, պատմականացավ, անմահացավ: Եթե ճարտարապետությունը քարացած երաժշտություն է, ապա Թորոս ճարտարապետը այդ քարացածը վերածել էր կենդանի երգի, նա մեր հոյակապ ավերակների ու հուշարձանների նույնքան հոյակապ երգիչն է":

ՍԻՐԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ, շարունակվում է "Զարյա" թերթի բաժանորդագրությունը 2015 թվականի 1-ին կիսամյակի համար:

**Բաժանորդագրվել դուք կարող եք փոստատարների մոտ, գյուղերի կապի բաժանմունքներում կամ թերթի խմբագրությունում: Վեց ամիս ժամկետով բաժանորդագրության գինը կազմում է 348 ռուբլի 42 կոպեկ:**